

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՁԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

17 մարտ 2014թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77¹ - 77⁶ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 2014 թվականի մարտի 04-ի N 83 - Ա որոշումը և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի մարտի 07-ի N 35-Ա հրամանը՝ ս. թ. մարտի 12-ից 14-ը ներառյալ՝

ՀՀ Կոտայքի մարզպետարանի (վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խումբը) աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Սամվել Հակոբյանի (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռոբերտ Թումոյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Եղիշե Ավետիսյանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Կամո Թումոյանի, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Արամ Վիրաբյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Շավարշ Արտաշյանի (աշխատանքային խմբի անդամներ) կողմից իրականացվեց վարչական հսկողություն

- արտակարգ իրավիճակների (հավելված 1),
- առևտրի և ծառայությունների (հավելված 2),
- բնապահպանության (հավելված 3),
- ընդերքօգտագործման (հավելված 4),
- անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության (հավելված 5),
- հողօգտագործման (հավելված 6),
- պաշտպանության (հավելված 7),
- սոցիալական պաշտպանության (հավելված 8),
- ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ. (հավելված 9),
- առողջապահության (հավելված 10),
- քաղաքաշինության (հավելված 11)


բնագավառներում ՀՀ Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնքում:

1.Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածներով /1-11/ ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կրողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3.Վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեն՝ Կաթնաղբյուր համայնքի ղեկավար Ք. Ասատրյան:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը ներկայացվել է ՀՀ Կոտայքի մարզի Կաթնաղբյուր համայնքի ղեկավարին:

| | |
|-------------------------------------|---|
| Աշխատանքային խումբ՝ | |
| ղեկավար՝ |  Ս. Հակոբյան, |
| անդամներ՝ |  Ռ. Թումոյան, |
| |  Ա. Թումոյան, |
| |  Ե. Ավետիսյան, |
| |  Ա. Վիրաբյան, |
| |  Շ. Արտաշյան |
| Կաթնաղբյուր համայնքի ղեկավար |  Քաչիկ Ասատրյան: |

ԿԱԹՆԱՂՔՅՈՒՐ

1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|-------------|---|--------------|--|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| <p>Բնակչության տարահանման պլանավորում և կազմակերպում. Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծված համայնքային տարահանման հանձնաժողով, տարահանման հանձնաժողովի հաստատված կանոնադրություն, տարահանման հանձնաժողովի կողմից մշակված տարահանման պլան</p> | | <p>V Համայնքի ղեկավարի 11.10.20013թN 30-Ա որոշմամբ ստեղծվել է տարահանման հանձնաժողով, հաստատվել է տարահանման հանձնաժողովի կանոնադրություն</p> | | <p>Տարահանման հանձնաժողովի կողմից մշակված չէ տարահանման պլան, չի կատարվել <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի <<դ>> կետի, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջները: Համայնքի ղեկավարը իրականացնում է համայնքի բնակչության, նյութական եւ մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը եւ անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը:</p> | <p>Առաջարկվում է սահմանված կարգով՝ տարահանման հանձնաժողովի կողմից մշակել տարահանման պլան:</p> | <p>20 օր</p> |
| <p>4. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան</p> | | | <p>V</p> | <p>Չի կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման՝ 5-րդ կետի պահանջը՝ համայնքի ղեկավարը 6-ամսյա ժամկետում մշակում են՝ ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանները՝ համաձայնեցնելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան</p> | <p>Առաջարկվում է սահմանված կարգով վերացնել արձանագրված խախտումը:</p> | <p>20 օր</p> |

| | | | | | | |
|---|--|--|---|---|---|-------|
| | | | | տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ և ներկայացնում համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի հաստատմանը: | | |
| 5. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | | | V | Չի կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման՝ 7-րդ կետի պահանջը՝ համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմինները սույն որոշման 5-րդ կետով հաստատված պլանների իրականացման համար 12-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն պետք է ներկայացնեն պլանների համակողմանի ապահովման մասին հայտեր: | Առաջարկվում է սահմանված կարգով վերացնել արձանագրված խախտումը: | 20 օր |

Հավելված 2. Առևտրի և ծառայությունների բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|-------------|------------------|--------------|--|---|--|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում | | V | | Թերի է կատարվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, 3-րդ մասի պահանջի կատարումը՝ համաձայն որի առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական | Առաջարկվում է՝ սահմանված կարգով, վաճառքը կատարել ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում | 20 օրյա ժամկետում խախտումը վերացնել/Համայնքի տարածքում գործում են 3 առևտրի օբյեկտներ/: |

| | | | | | | |
|--|--|---|---|--|---|---|
| | | | | արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի տարանջատված մեկուսամասերում: | | |
| 3.Առևտրի օբյեկտները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով | | | V | Չի կատարվել ՀՀ Կառավարության 19.02.2002թ. թիվ 270-Ն որոշման պահանջները | Ապահովվել ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակներով: | Ժամկետ 20 օր: /Համայնքի տարածքում գործում են 3 առևտրի օբյեկտներ/: |
| 29.Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով: | | V | | Թերի է կատարվել ՀՀ Կառավարության 19.02.2002թ. թիվ 270-Ն որոշման պահանջները: | Ապահովվել ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակներով: | Ժամկետ 20 օր: /Համայնքի տարածքում գործում են 2 հանրային սննդի օբյեկտներ/: |

Հավելված 6. Հողօգտագործման բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|-------------|------------------|--------------|--|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով | | | v | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ , չի պահպանվել ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը>>: 2016թ. համայնքը առանց գլխավոր հատակագծի չի կարող իրականացնել համայնքային և պետական սեփականության հողամասերի հետ կապված գործառնություններ | Առաջարկվել է մինչև 2015թ պատվիրել գլխավոր հատակագիծ | 2015թ |
| 10. Հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է՝ 1) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում, ինչպես նաև էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ և | | v | | Տեղի է ունեցել հողամասի ուղղակի վաճառքի 1 դեպք,չպահպանելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 | | |

| | | | | | | |
|---|--|--|----------|---|--|--|
| <p>համապատասխան գծային ենթակառուցվածքների, ցանկացած այլ բնական մենաշնորհային ոլորտի հիմնական գործունեությանն առնչվող օբյեկտների (շենքեր, շինություններ, այլ օժանդակ կառույցներ) կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում.</p> <p>2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ բնակելի շենքերը, շինությունները բնակելիի վերափոխելու արդյունքում ձևավորված բնակելի տների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերն օտարելիս.</p> <p>3) գոյություն ունեցող բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ նշանակության օբյեկտների, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով:</p> | | | | <p>որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջը, այսինքն չի կազմվել համապատասխան հողաշինարարական գործ:</p> | | |
| <p>13. Հողամասերի աճուրդի կազմակերպման փաթեթում ներառվում են օրենքով և սույն կարգով սահմանված՝ անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը՝</p> <p>1) օտարման պայմանագրի նախագիծը.</p> <p>2) օտարվող հողամասի հատակագծի նախագիծը.</p> <p>3) քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված քաղաքաշինական, բնապահպանական և այլ բնույթի պահանջների և սահմանափակումների, ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների ամրագրմամբ, այդ թվում՝ հողամասի նկարագրությունը (կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը), շինարարության սկզբի և ավարտի ժամկետները:</p> | | | <p>v</p> | <p>Համայնքում 2011-2014թթ, ստուգման ժամանակահատվածում բնակավայրերի նշանակության հողամասերի աճուրդի կազմակերպման փաթեթներում բացակայում էր ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը /Նախտվել է ՀՀ կառավարության 12:04:2001թ թիվ 286 որոշմամբ սահմանված կարգի 23 կետի /գ ենթակետի պահանջը /</p> | | |
| <p>14. Աճուրդի արդյունքների ամփոփումից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 12-օրյա ժամկետում աճուրդի</p> | | | | <p>Բնակավայրի նշանակության հողերի կայացած համար</p> | | |

| | | | | | | |
|--|--|--|---|--|--|----------------|
| կազմակերպիչը հաղթողին տրամադրում է հողամաս տրամադրելու վերաբերյալ լիազոր մարմնի որոշումը, օտարման պայմանագիրը, օտարված հողամասի հատակագիծը, իսկ քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար նաև՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը: | | | v | աճուրդների հաղթողներին ճարտարապետահատակագծային արաջադրանք չի տրամադրվել ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի պահանջով | | |
| 15. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդի դեպքում մեկ լոտով օտարվող հողամասի առավելագույն չափը չի կարող 20 հեկտարից ավելի լինել, իսկ նվազագույն չափը չի կարող պակաս լինել տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից, եթե համայնքի հողերի օգտագործման սխեմայով այլ չափ նախատեսված չէ: | | | v | գյուղ. Նշանակության հողերի համար կայացած աճուրդները տեցի են ունեցել չպահպանելով ՀՀ կառավարության 12.04.2001թ 286 որոշման 23/ կետի պահանջը, այսինքն աճուրդի է ներկայացվել սեփականաշնորհման 1 հողաբաժնից պակաս չափով լոտ: | | |
| 34. Մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ: | | | v | մրցութային հանձնաժողովում ընդգրկված մարզպետարանի համապատասխան մասնագետը ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ սահմանված կարգի 49-րդ կետի պահանջով | Առաջարկել՝ ստեղծել մրցութային հանձնադրով, որում ընդգրկել մարզպետարանի համապատասխան ներկայացուցիչին | 10 օրյա ժամկետ |

Հավելված 7. Պաշտպանության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|--|-------------|------------------|--------------|---|---|---|
| 2. Համայնքի զինապարտների գրանցամատյանները վարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: | | v | | Թերի է կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշման 14-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները համաձայն որի պետական ու տեղական | Առաջարկվում զինապարտների գրանցամատյանների վարումը համապատասխանեցնել սահմանված կարգին: | 20 օր |

| | | | | | |
|--|--|--|--|---|--|
| | | | | <p>ինքնակառավարման մարմինները, անկախ կազմակերպական-իրավական ձեւից, գործատու կազմակերպությունները եւ ուսումնական հաստատությունները վարում են աշխատող կամ սովորող, տեղական ինքնակառավարման մարմինները՝ նաեւ համայնքում բնակվող (համայնքում հաշվառված կամ չհաշվառված, սակայն փաստացի բնակվող (1 ամսվանից ավելի) (այսուհետ՝ համայնքում բնակվող) զինապարտների վերաբերյալ գրանցամատյան՝ համաձայն N 1 ձեւի, ըստ տարեթվերի եւ այբբենական հերթականության, որում գրառվում են զինապարտի ազգանունը, անունը եւ հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն (եթե հաշվառված չէ, սակայն բնակվում է համայնքում՝ փաստացի բնակության վայրը), օրը, ամիսը եւ տարեթիվը, կրթությունը, ուսման եւ աշխատանքի վայրերը, պաշտոնը, տարածքային զինկոմիսարիատում կցագրման օրը, ամիսն ու տարեթիվը, տարածքային զինկոմիսարիատում՝ պահեստագործում հաշվառվելու օրը, ամիսը եւ տարեթիվը, բնակության վայրի հաշվառումից հանվելու օրը, ամիսն ու տարեթիվը, զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայությունն ու ժամկետը կամ պարտադիր զինվորական ծառայության</p> | |
|--|--|--|--|---|--|

| | | | | | | |
|---|--|--|---|--|--|--|
| | | | | գորակոչից տարկետման հիմքը եւ ժամկետն ամրագրված լինելը: Գրանցամատյանը վարվում է փաստաթղթային եւ (կամ) էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթային եղանակով գրանցամատյանը վարվում է առանձին գրքով, որը գործավարության համար սահմանված կարգով կարվում եւ կնքվում է, իսկ էջերը համարակալվում են: | | |
| 12. Բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն: | | | V | Պահպանված չէ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը: | Առաջարկվում է՝ սահմանված կարգով, աջակցել և դրա վերաբերյալ իրավական ակտերը և փաստերը պահել աշխատակազմում: | |

Հավելված 8. Սոցիալական պաշտպանության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|----------------------|-------------|------------------|--------------|--------------------------|--|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |

| | | | | | | |
|---|--|---|--|--|---|-------------------------------|
| <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործառույթները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p> | | V | | <p>Չկա համայնքի ղեկավարի կողմից կարգադրություն հաշմանդամների կողմից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծման մասին, առկա է հարթակներ:</p> | <p>Առաջարկվում է <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի ապահովում, տալ կարգադրություն, սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերում ապահովել հարթակներով:</p> | <p>Ժամկետը սահմանել 20 օր</p> |
| <p>2. ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետ՝ Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը (սկզբնական, տարածքային և կենտրոնացված) իրականացվում է համապատասխանաբար խնամակալության և հոգաբարձության մարմինների (սկզբնական հաշվառում), Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) (տարածքային հաշվառում) և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից (կենտրոնացված հաշվառում):</p> | | V | | <p>Համայնքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ չկան նման գործառույթ չի իրականացվել</p> | <p>Ապահովել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի ապրիլի 12-ի N 62-Ն հրամանով հաստատված ձև 1 մատյան, որը լինի համարակալված, թելակալված և կնիքված համայնքի ղեկավարի կողմից</p> | <p>Ժամկետը 20 օր</p> |

Հավելված 10. Առողջապահության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|-------------|------------------|---------------------|---|---|---|
| <p>1.Առկա է աղբահանության սխեման և ժամանակացույցը</p> <p>3. +5°C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամեն օր հաճախականությունը:</p> | | | <p>V</p> <p>V V</p> | <p>Հաստատված չէ աղբահանության սխեման և ժամանակացույցը</p> <p>Հաստատված չէ աղբահանության սխեման և ժամանակացույցը, ապահովել „Աղբահանության և սանիտարական մաքրման մասին.. ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը, որը պարունակում է համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները</p> <p>Ապահովված չէ հաճախականությունը, քանի որ համայնքում բազմաբնակարան շենքեր չկան, ՀՀ կառավարության 04.10.2007թ. N 1161-Ն որոշում հոր.2. կետ.1</p> | <p>ընդունել ավագունու կողմից օրենքով սահմանված համապատասխան որոշում</p> <p>ընդունել ավագունու կողմից օրենքով սահմանված համապատասխան որոշում, բազմաբնակարան շենքեր լինելու դեպքում</p> | <p>Ժամկետ 20 օր</p> <p>Ժամկետ 20 օր</p> |

| | | | | | | |
|--|----------|--|----------|--|--|---------------------|
| <p>1. Առկա են աղբահանության սխեմաները, համաձայն որոնց իրականացնում են ոչ վնասակար թափոնների հավաքումը՝ սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը):</p> | | | <p>V</p> | <p>աղբահանության սխեմաներ չկան ապահովել ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին.. ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջը, որը պարունակում է համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները</p> | <p>ընդունել ավագունու կողմից օրենքով սահմանված համապատասխան որոշում աղբահանության սխեմաների վերաբերյալ</p> | <p>Ժամկետ 20 օր</p> |
| <p>7. Աղբահանության ժամանակ աղբակույտերը և տերևակույտերը այրված չեն:</p> | | | <p>V</p> | <p>չկա համապատասխան որոշում աղբակույտերի և տերևակույտերի տեղափոխման վերաբերյալ, քանի որ համայնքում աղբահանությունը չի կատարվում աղբարկղների միջոցով ՀՀ Առողջապահության նախարարի 22.12.2009թ N 25 –Ն հրաման կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը, դրանց այրումը արգելվում է</p> | <p>ընդունել ավագունու կողմից օրենքով սահմանված համապատասխան որոշում, կոնտեյներներով աղբը տեղափոխելու դեպքում</p> | <p>Ժամկետ 20 օր</p> |
| <p>16. Փողոցները, ճանապարհները, հրապարակները, զբոսայգիները, պուրակները ենթարկված են սանիտարական մաքրման</p> | <p>V</p> | | | <p>չկա համապատասխան որոշում փողոցներ և ճանապարհների սանիտարական մաքրման վերաբերյալ, ՀՀ Առողջապահության նախարարի 22.12.2009թ N 25 –Ն հրաման կետ 24 փողոցների և ճանապարհների սանիտարական մաքրման վերաբերյալ</p> | <p>ընդունել համապատասխան որոշում սանիտարական մաքրման վերաբերյալ</p> | <p>Ժամկետ 20 օր</p> |
| <p>17. Ամռան ամիսներին փողոցները ենթարկված են ջրման:</p> | | | <p>V</p> | <p>չկա համապատասխան որոշում ամռան ամիսներին փողոցների ջրման</p> | <p>ընդունել համապատասխան որոշում</p> | <p>Ժամկետ 20 օր</p> |

| | | | | | | |
|--|---|--|---|---|--|--------------|
| | | | | վերաբերյալ, «Առողջապահության նախարարի 22.12.2009թ N 25 –Ն հրաման կետ 24 փողոցների և ճանապարհների վերաբերյալ | | |
| 18. Բնակավայրերը պահված են պատշաճ սանիտարական վիճակում՝ սպառման թափոններից, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող աղբից, կենցաղային ավելորդ իրերից, փոշու կուտակումներից զերծ: | V | | | | | ժամկետ 20 օր |
| 19. Ձմռանը փողոցների, ճանապարհների հետիոտնի համար նախատեսված և երթևեկելի մասերը, հրապարակների, զբոսայգիների հետիոտնի մասերը մաքրված են ձյունից և սառույցից: | | | V | ձմռանը իրականացվում է փողոցների և ճանապարհների մաքրման աշխատանքները ձյունից և սառույցից, սակայն է բացակայում է համապատասխան իրավական ակտը , սակայն է բացակայում է համապատասխան իրավական ակտը, «Առողջապահության նախարարի 22.12.2009թ N 25 –Ն հրաման կետ 25 ձմռանը փողոցների և ճանապարհների ձյունից և սառույցից մաքրելու վերաբերյալ | ընդունել օրենքով սահմանված կարգով համապատասխան որոշում | ժամկետ 20 օր |

Հավելված 11. Քաղաքաշինության բնագավառ

| Դրույթների անվանումը | Պահպանված է | Թերի է պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություն ներ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|--|-------------|------------------|--------------|--|---|---|
| «Առևտրային» սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | | | V | Գլխավոր հատակագծը բացակայում է չի իրականացված համայնքի ղեկավարի պարտադիր լազրությունները ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ | Պատվիրել գլխավոր հատակագծ | 01.08.2015թ |

| | | | | | | |
|--|--|---|---|--|--|-------------|
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատուցած գոտևորման նախագծի առկայություն | | | V | Գոտևորման նախագծը և գլխավոր հատակագծը բացակայում է | Պատվիրել գլխավոր հատակագծ | 01.08.2015թ |
| գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված և հաստատված նախագծային առաջադրանքի հիման վրա | | | V | Գլխավոր հատակագծը բացակայում է չի իրականացված համայնքի ղեկավարի պարտադիր լազորությունները ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի վերաբեյալ | Պատվիրել գլխավոր հատակագծ | 01.08.2015թ |
| կառուցապատման նպատակով հողամասերը տրամադրվում են հաստատված ծրագրային փաստաթղթերով սահմանված նպատակային և գործառնական նշանակությանը և միջոցառումների առաջնահերթությանը համապատասխան | | | V | Հաստատված ծրագրային փաստաթուղթ գլխավոր հատակագծը բացակայում է | Պատվիրել գլխավոր հատակագծ | 01.08.2015թ |
| քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքնի զարգացման քառամյա ծրագրում նախատեսված է գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակում | | | V | Քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ գլխավոր հատակագծը բացակայում է | Առաջնորդվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն և 2001 թվականի մայիսի 11-ի N 408 որոշումներով | 01.08.2015թ |
| գլխավոր հատակագծի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններն արտացոլված են գործող գլխավոր հատակագծի համապատասխան գծագրերում և բացատրագրում | | | V | Գլխավոր հատակագծը բացակայում է | Պատվիրել գլխավոր հատակագծ | 01.08.2015թ |
| կառուցապատման նպատակով տրամադրած հողամասերն ապահովված են ինժեներական ենթակառուցվածքի գծերով | | | V | Ինժեներական ենթակառուցվածքները բացակայում են | Անցկացնել ինժեներական ցանցեր | 01.08.2015թ |
| համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում արտացոլված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի փոփոխությունները: | | V | | Գլխավոր հատակագծի, գոտևավունման նախագծի և համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը բացակայում է չի վարվում քաղաքաշինական կադաստր | Պատվիրել գլխավոր հատակագծ | 01.08.2015թ |
| 1) համայնքի տարածքում ընդգրկված քաղաքաշինական գործունեության օբյեկտների՝ անշարժ գույքի միավորների, գործառական տարածքների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և բնակավայրերի քաղաքաշինական | | | V | համայնքի քաղաքաշինական անձնագիրը բացակայում է չի վարվում քաղաքաշինական կադաստր | Պատվիրել գլխավոր հատակագծ վարել քաղաքաշինական կադաստր | 01.08.2015թ |

| | | | | | | |
|--|--|---|---|---|---|-------------|
| անձնագրերը. | | | | | | |
| 2) համայնքի քաղաքաշինական անձնագիրը. | | | V | համայնքի քաղաքաշինական անձնագիրը բացակայում է | Պատվիրել գլխավոր հատակագծ վարել քաղաքաշինական կադաստր | 01.08.2015թ |
| 6) ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտերը. | | V | | Բացակայում է ծածկված և միջանկյալ աշխատանքների ակտերը խախտելով ՀՀ կառավարության 2003թ 0մ այիսի 8-ի 626-Ն որոշման 6 –րդ և 21 ղղ կետի պահանջները | | 20 օր |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

08.04.2014թ. N 01/15.1/1121-14

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ք. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասատրյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.41 կետի՝ 2014 թվականի մարտ ամսին մարզպետարանի կողմից համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրության մեկ օրինակը սահմանված կարգով հանձնվել է Ձեզ:

Ըստ նշված հրամանագրի 1.43 կետի առաջարկվում է մինչև ս.թ. ապրիլի 30-ը՝ մանրամասն ըստ քնագավառների, տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան վարչական հսկողության արդյունքում արձանագրված խախտումները, թերությունները վերացնելու և ձեռնարկված միջոցառումների մասին:

Միաժամանակ՝ համաձայն վերը նշված հրամանագրի 1.44 կետի, վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունը և հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ արված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և սահմանված կարգով ներկայացնել ավագանու որոշումը:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ